

տեղ տեղ ողջ թաղուած մարդիկ կը հանդիպին . վասն զի մասնաւոր հիւանդութիւններ կան որ մարդուս վրայ յանկարծ մարմնուք կը բերեն ու մեռածի պէս կը թողուն :

(Ժ) Կուրիս քաղաքին մէջ հինգ տարեկան տղայ մը իր ծնողաց աղքատութիւնը տեսնելով՝ դռնէ դուռ ուղորմութիւն կը մուրայ եղեր՝ երեսը գոցած , ու այնպէս կը կերակրէ եղեր իր ծնողքը . ասիկայ 1843^{ին} ձմեռուան իրիկուն մը նոյնպէս մուրալու կ'ելլէ . ան գիշերը սաստիկ ձիւն գալով , խեղճ տղան ճամբան կը կորսնցունէ ու չգիտեր թէ ուր երթայ . լալով լալով դրան մը առջեւ կը կծկըտի , քունը կը տանի , ու գիշերուան ցըրտէն կը սառի կը մնայ : Եւ տուն մարդիկ կը տեսնեն տղան ան խեղճութե մէջ , ու կարծելով թէ մեռեր է , աղքատութեանը պատճառաւ ալ ուրիշ բան չեն ըներ , կը դնեն կողովի մը մէջ , մեռելաթաղին կուտան որ տանի թաղէ : Եւ մեռելաթաղը կ'երթայ , փորած գերեզման մը չգտնելով՝ տղան մէկդի կը դնէ արեւուն մէջ ու կը սկըսի գերեզման մը փորել : Եւ արեւուն տաքութենէն մարմնոյն սառոյցը կը քակուի . կ'արթննայ տղան ու կը սկսի հաց ուղեւ . մեռելաթաղը աս տեսնելուն պէս կ'ապշի կը մնայ . ետքը բանը հասկընալով՝ ձեռքէն կը բռնէ քաղաք կը բերէ , ու ինչուան հիմայ տղան ողջ է կ'ըսեն :

ԶՈՒՄԱՃԱԼԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ

Պաշ, «Իրաւ Դոշ»

ՊԱՅՐՈՑԻ տղոց մէկը օր մը դիպուա ծով դաստատան ապակիներէն մէկը կը կոտրէ . և թէպէտ ուրիշները չեն իմանար , բայց ամէն անգամ որ իրեն հարցմունք մը կ'ընեն՝ սիրտը դող կ'ել

լէ եղեր : Եւ իրակի օրը քրիստոնէական վարդապետութեան վարպետը կ'երթայ նոյն դաստատան տղոցը դաս տալու . կը հարցընէ իրենց թէ « Եւ խարհքս ո՞վ է ստեղծեր » : Եւ խեղճ տղուն խելքը միտքը՝ իր կոտորած ապակիին վրայ ըլլալով , կը դառնայ « Ես չեի , վարժապետ , ես չեի » , կ'ըսէ : Եւ զարմանայ վարժապետը , « Եւ կ'ըսես ծօ , կ'ըսէ . ես չեի ի՞նչ ըսել է : — Հրամարես վարժապետ , ես էի . բայց մէյմըն ալ չեմ ըներ » , կ'ըսէ լալով , ու թողութիւն կ'առնէ :

Իրեք վարպետ բժիշկ :

ՏԻՄՈՒԼԵՆ անունով հռչակաւոր բժիշկը մեռնելու մօտ է եղեր . երբ որ չորս դին արհեստակիցները առած կը ցաւին ու կ'ափսոսան վրան , կը դառնայ կ'ըսէ անոնց . « Պարոններ , իրեք վարպետ բժիշկ կը թողում ես իմ ետեւս » : Եւ որ կը լսեն՝ կը սկըսին վրայ տալ որ զուրցէ թէ արդեօք որոնք են . վասն զի ամէն մարդ կարծէ եղեր թէ՛ մէկը ինքը պիտի ըլլայ . « Մէկը ջուրն է կ'ըսէ , մէկը շարժմունքը , մէկալն ալ քիչ ուտելը » :

ՀԱՆԵԼՈՒԿ

ԱՐԾԱԹ վանդակ մի տեսայ ,
Մէջն ոսկի ջուր կը ծըփայ :

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ ՀԱՆԵԼՈՒԿՆ ԷՐ ԽԱԼՈՂ :